**Արձանագրություն N 4**

ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար թվային տեսախցիկների և ֆոտոխցիկների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-24/20 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

19.04.2024թ.
ժամը՝ 12:00

ք. Երևան, Բաղրամյան 19

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Վ.Հարությունյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | *Լ. Լևոնյան, Լ. Անտոնյան, Դ. Օհանջանյան, Վ. Թորոսյան, *Տ. Բադալյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Հ.Թադևոսյան |
| | *Նիստից բացակայում է Լևոն Լևոնյանը և Տիգրան Բադալյանը |

***1. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրեր/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և հայտերի գնահատման մասին***

Նիստը վերսկսվեց 19.04.2024թ. ժամը 12:00-ին: Հանձնաժողովն արձանագրեց, որ LA IMPORT LLC-ն և Գևորգ Նահապետյան Ա/Ձ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել են հայտերում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց՝ Ընթացակարգի 1-ին, 2-րդ և 4-րդ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ LA IMPORT LLC-ի և Ընթացակարգի 3-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ Գևորգ Նահապետյան Ա/Ձ-ի հայտերը գնահատել բավարար:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:*

***2. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների և մերժված հայտերի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրերի կնքման վերաբերյալ***

19.04.2024թ.-ին Հանձնաժողովը որոշեց՝

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ LA IMPORT LLC-ին Ընթացակարգի 1-ին, 2-րդ և 4-րդ չափաբաժիններով, Գևորգ Նահապետյան Ա/Ձ-ին 3-րդ չափաբաժնով հայտարարել ընտրված մասնակիցներ, իսկ Ընթացակարգի մյուս մասնակիցների հայտերը մերժել:

2.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

2.3 Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագիր:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0*

Հանձնաժողովի

| | | |
|---|---|---|
| Նախագահ՝ | _______________ | Վարդան Հարությունյան |
| անդամներ՝ | _______________ | Լաուրա Անտոնյան |
| | _______________ | Դավիթ Օհանջանյան |
| | _______________ | Վարդան Թորոսյան |
| քարտուղար՝ | _______________ | Հեղինե Թադևոսյան |